ռեսցի ամենայն ինչ, և մեկնեցան իւրաքանչիւր 'ի տեղի իւր։

Ապա Քաղաքապետն առաքեաց 'ի Բեթղեհէմ զԳանձապետ իւր զՄուսդաֆա. գնացին և 'ի Հայոց Դիոնէսիոս և Եւդոկիացի Կարապետ Վարդապետք, եւ 'ի Լատինաց մեծ Տեսուչն եւ այլք։ Եւ ժողովեալ յեկեղեցին եհարց Գանձապետն ցԼատինս զպատճառ խռովութեան իւրեանց, և նոքա ցուցին զպատկերն 'ի վերայ դրան նոցին 'ի ներքուստ, և զճանապարհն 'ի միջոյ եկեղեցւոյն. Գանձապետն ցուցանէր չունել իրաւունս Լատինաց. զի Հայք որոշեալ էին զճանապարհ ժողովրդոց և եկեղեցականաց նոցին չանցանել 'ի վերայ սփռոցացն Հայոց, եւ պատուիրէր մնալ այնպէս մինչ ցգալուստ նոր Դատաւորի, այլ Լատինք պնդէին՝ հասարակութեամբ անցանել 'ի միջոյ նոցին, թէեւ իցեն 'ի Պատարագի, եւ բռնադատէին բառնալ զսփռոցն զի յատկասցի ճանապարհն, և խնդրէին դիր 'ի Քաղաքապետէն որ ինքն արգելեալ իցէ զԼատինս 'ի տեղւոջէ յայնմանէ. զի պարտաւոր ցուցնեն զնա իբր խափանիչ օրինաց նոցին, այլ Գանձապետն ոչ ընկալաւ զրանս նոցա. զի ոչ էր եկեալ սահմանել և դրել ինչ, այլ տեսանել եւ պատուիրել դադարիլ 'ի հակառակութենէ։

Յետ այնորիկ իջին յԱյրն, և Լատինք խօսէին զմեծութենէ եւ զցածութենէ կանթեղացն եւ զսփռոցէն Հայոց, և Լուսարարն Ցունաց ասէ՝ թէ եկեղեցին Հայոց ունի սովորութիւն սփռել 'ի ժամ պատարագի և ապա բառնալ, նոյնպէս և Գանձապետն ասէր՝ չունել իրաւունս խօսելոյ 'ի վերայ պաշտամանց իւրաքանչիւր ազգի։ Սակայն Լատինք լռեցին 'ի վերայ այսոցիկ իրաց և չունէին ինչ ասել, և վասն ճանապարհին ոչ երբէք յանձն առին լռել, և ոչ անսային բանից Գանձապետին, եւ հնազանդիլ կարգադրութեան Հայոց, այլ անարգել անցանել անտի ժողովրդոց իւրեանց. զայս ասացեալ մնին 'ի վանս իւրեանց։ Իսկ Գանձապետն ելեալ արտաքս ժողովեաց զգլխաւորս գիւղին և ընթերցաւ առաջի նոցա զհրաման Քաղաքապետին, և նոցա հնազանդեալ խոստացան չանցանել 'ի վերայ սփռոցացն Հայոց թէ և Լատինք բռնի ձգեսցեն զինքեանս։ Եւ ապա կոչեցին Լատինք առանձին զԳանձապետն և տարեալ յեկեղե-